ISSN 1829-2771

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2017

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА
## АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

# HISTORY AND CULTURE
## JOURNAL OF ARMENIAN STUDIES
(COLLETTION OF SCIENTIFIC ARTICLES)

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2017

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի և Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
**Արամ Սիմոնյան** - նախագահ (ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտոր), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Հակոբ Պետրոսյան** (բանասիր. գիտ. թեկն.):

Главный редактор: докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
**Арам Симонян** (председатель, ректор ЕГУ, членкор. АН РА, докт. ист. н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. н., проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. н., проф.), **Айк Аветисян** (докт. ист. н., проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. н., проф.), **Игит Гарибян** (докт. ист. н., проф.), **Генрих Абраамян** (докт. ист. н., проф.), **Айказ Оганесян** (докт. ист. н., проф.), **Гамлет Петросян** (докт. ист. н., проф.), **Ашот Нерсесян** (докт. ист. н., проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук), **Овик Григорян** (канд. ист. н., доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. н., доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. н., доц.), **Акоп Петросян** (канд. филолог. наук).

Editor-in-Chief- Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
**Aram Simonyan** (Chairman, Rector of YSU, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor), **Hakob Petrosyan** (PhD in Philology).

Արմինե Գաբրիելյան

# ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ (Մ.Թ.Ա. I – Մ.Թ. III ԴԴ.)

*Բանալի բառեր*-անտիկ խեցեղեն, անոթ, ֆիգուրատիվ պատկերներ և տեսարաններ, փորագրազարդում, դրոշմազարդում:

Արցախի Տիգրանակերտը գտնվում է ԼՂՀ Ասկերանի շրջանում՝ Խաչենագետի աջ ափին վեր խոյացող Վանքասար լեռան հարավ-արևելյան ներքնալանջին և այդ լանջին կից գոգավորությունում, Արքայական աղբյուրների հարևանությամբ: Հուշարձանի պեղումներով ձեռք են բերվել մեծ քանակությամբ նյութեր, որոնց ուսումնասիրությունը հույժ կարևոր է ոչ միայն Արցախի, այլև անտիկ Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրության համար: Շուրջ 10 տարի տևած պեղումների ընթացքում հայտնաբերված այս նյութի մի զգալի մասը կազմում է անտիկ խեցեղենը, որն աչքի է զարնում ինչպես ձևերի առատությամբ (կարասներ, խոհանոցային զանազան անոթներ, կաթսաներ, շուրթերի տարատեսակ լուծումներ ունեցող թաս-քրեղաններ, սափորներ, ըմպանակներ, տափաշշեր, երեքնուկաձև շուրթով և ծորակավոր անոթներ, պնակներ և այլն), այնպես էլ գեղարվեստական հարդարանքի բազմազանությամբ: Բավարար քանակությամբ ներկայացված նյութը[1] հնարավորություն է ընձեռում կատարել անտիկ խեցեղենի հարդարանքի դասակարգում, որն էլ սույն հոդվածի խնդրո առարկան է:

Նյութի քննությունը ցույց տվեց, որ անոթների գեղարվեստական հադարանքն իրականացվել է **գունազարդման, փայլեցման, փորագրման, դրոշմազարդման, ծեփման և վերադրման եղանակներով (թվարկումն ըստ հանդիպման հաճախականության)**:

I. Ի տարբերություն ուրարտական բալագույն, կարմիր, բաց շագանակագույն լավ փայլեցում ունեցող անոթների, ինչպես նաև մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ կեսի վարդագույն, մոխրագույն, գորշաշագանակագույն մակերես ունեցող և փորագիր ու փայլեցման նախշազարդումով հարդարված խեցեղենի, անտիկ ժամանակաշրջանում Հայաստանում, հետևապես և Արցախում խեցեղենի գեղարվեստական հարդարանքի նախընտրելի և մասսայական միջոցը դարձավ **գունազարդման** եղանակը[2]:

Անոթների հարդարման գործընթացը հետևյալն է. անոթների ձևավորումից և մակերեսները մշակելուց հետո արտաքինը պատվել է բաց դեղնադարչնագույնից մինչև մուգ շագանակագույն երանգների քսուքներով, որոնց չորացումից հետո կատարվել է անոթների փայլեցումը, ապա նախշազարդումը: Փայլեցվել է թե՛ անգոբը, թե՛ զարդամոտիվը, սակայն հանդիպում են նաև փայլեցված մակերեսին անփայլ նկարազարդ կամ անփայլ մակերեսի վրա փայլեցված զարդ կրող օրինակներ ևս: Նկարազարդումն իրականացվել է հիմնականում միագույն ներկերով, թեև հանդիպում են նաև բազմագույն կատարում ունեցող օրինակներ (աղ. II/20): Օգտագործվող ներկապակը կազմված է օխրայի տարբեր երանգներից՝ բաց սանգինից մինչև կարմիր, շագանակագույնի՝ բաց երանգից մինչև հագեցած մուգ երանգները և սև գույնը: Զարդանկարը անոթի մակերեսին դրվել է հիմնականում հակադրության (կոնտրաստի), երբեմն էլ համերանգության սկզբունքով:

Զարդանկարի տեղադրումն անոթի մակերեսին գլխավորապես թելադրված է անոթի ձևով: Փակ անոթների զարդանախշը զետեղվել է հիմնականում վերին հատվածի՝ շուրթի, վզի, կանթերի, ինչպես նաև իրանի ամենալայն հատվածի վրա (աղ. II/21): Տափաշշերի դեպքում այն ծածկել է ուռուցիկ կողը (աղ. II/19): Բաց անոթների դեպքում,

[1] Ուսումնասիրվել և դիտարկվել է Տիգրանակերտի 2006-2015 թթ. պեղումների, ինչպես նաև Խաչենագետի և Թարթառի հովտից հայտնի անտիկ խեցեղենի մոտ մի քանի հազար միավոր:

[2] Тирацян Г., О расписной керамике древней Армении, «ИФЖ», 1965, № 3. сс. 265-281; Тер-Мартыросов Ф., О происхождении расписной керамики античной Армении, 1974, «ИФЖ», № 1, сс. 53-71.

ինչպիսիք են թասերը, ըմպանակները, գավաթները, պնակները և սկուտեղները, նկարազարդվել են անոթների թե՛ արտաքին, թե՝ ներքին մակերեսները (աղ. II/18):

Հելլենիստական ժամանակաշրջանում խեցեղենը գունազարդելու ավանդույթը հասնում է իր ծաղկման և զարգացման գագաթնակետին[1]: Տիգրանակերտի անտիկ խեցեղենը զարմացնում է իր զարդամոտիվների բազմազանությամբ՝ ներկայացնելով անտիկ դարաշրջանում խեցեղենի գունազարդման գործընթացի ամենավերջին և ամենածաղկուն փուլը:

Պատկերազարդման մոտիվները բազմազան են. դրանք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. երկրաչափական,
2. բուսական,
3. աստրալ,
4. ֆիգուրատիվ պատկերներ և տեսարաններ:

1. Գունազարդ խեցեղենի գեղարվեստական հարդարանքում գերակշռում են **երկրաչափական** զարդամոտիվները (աղ. I-II):

Այս խումբն իր հերթին ստորաբաժանվում է մի քանի ենթախմբերի.

1.1. անոթը գոտևորող հորիզոնական գծեր՝ մեկ և ավելի (աղ. I/1-5),
1.2. դեպի աջ կամ դեպի ձախ ուղղված անկյուններ (աղ. I/6-10),
1.3. անոթը գոտևորող հորիզոնական գծերի մեջ ներառված մեկից մինչև հինգ ներգծված անկյուններ (աղ. I/11-15),
1.4. թեք գծերով հարդարված եռանկյունիներ, (աղ. I/16-17)
1.5. հոծ ներկված եռանկյունիներ (աղ. I/18-19),
1.6. ցանցածածկ եռանկյունիներ (աղ. I/20-21),
1.7. ցանցկեն լայն գոտիներ (աղ. I/22-24),
1.8. ուղղահայաց և հորիզոնական ալիքաձև գծեր (աղ. I/25-27),
1.9. հոծ ալիքներ (աղ. I/28-29),
1.10. բեկյալ գծեր (աղ. II/1-2),
1.11. սանրաձև զարդ (աղ. II/3-5),
1.12. շղթա (աղ. II/6-8),
1.13. մեանդր (աղ. II/9-10),
1.14. շեղանկյուն, (աղ. II/11-12),
1.15. խաչապատկեր,
1.16. կետերով կազմված զարդամոտիվներ (կետերը օժանդակ տարր լինելով՝ կիրառվել են տարբեր հորինվածքներում) (աղ. II/13-15):

Վերոհիշյալ գրեթե բոլոր մոտիվները, որպես կանոն, ներառված են անոթը հարդարող հորիզոնական գոտիների մեջ: Ընդ որում յուրաքանչյուր գոտի հարդարվում է հիմնականում մեկ մոտիվով: Արդյունքում անոթը ներկայանում է տարատեսակ մոտիվներ ներառող 2-5 գոտիներից կազմված հորինվածքով: Կարելի է նկատել, որ հոծ ներկած եռանկյունիները տեղադրվում են անոթների պսակից ցած, ներգծված եռանկյունիներին հաջորդում են շղթայաձև և ալիքաձև գծերը (աղ. II/16-21):

2. **Բուսական** (աղ. III/1-10):

2.1. եղևնազարդ (ծառ, ճյուղ)[2] (աղ. III/1-5),
2.2. հասկ (աղ. III/6-10),

3. **Աստրալ նշաններ** (աղ. III/11-15), շրջանագծից կամ հոծ ներկած շրջանից հեռացող ճառագայթներ:

4. **Ֆիգուրատիվ պատկերներ և տեսարաններ** (աղ. III/16-23):

4.1. եղջերու, այծ, ձի, (աղ. III/16-17)
4.2. թռչներամ, (աղ. III/18-20)

---

[1] Тер-Мартыросов Ф., ук.соч. сс. 53-71.

[2] Բուսական մոտիվները խիստ ոճավորված են, այդ պատճառով դժվարանում է որոշել բույսերի տիպը կամ տեսակը: Որպես կանոն դրանք ուղիղ առանցքի երկու կողմում շեղ գծերով տրված պատկերներ են:

4.3. որսի տեսարան (աղ. III/21-23):

Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենում սակավ են հանդիպում մարդակերպ (անտրոպոմորֆ) և կենդանակերպ (զոոմորֆ) պատկերներ: Այս համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Տիգրանակերտից 13 կմ հեռավորության վրա գտնվող Մարտակերտ քաղաքում պատահաբար հայտնաբերված թաղման կարասն իր մեջ պարունակած նյութերով[1]: Բուն թաղման կարասը ուսին կրում է կարմիր ներկով արված ֆիգուրատիվ պատկերներ: Վարդագույն ուսամասի վրա ալ կարմիր գույնով հոծ պատկերված է դեպի ձախ ուղղված եղջերու (աղ. III/16): Այն համարձակ և ազատ կատարում ունի: Ճշգրտորեն են փոխանցված կենդանու մարմնի մանրամասները, ազդեցիկ ճյուղավորված եղջյուրները: Մեկ այլ բեկորի վրա դեպի ձախ գնացող հեծյալի և նրանից ձախ անորոշ պատկերներ են (աղ. III/17): Ամենայն հավանակությամբ թաղման կարասի վրա որսի տեսարան է պատկերված:

Թաղմանն ուղեկցող նյութերից իր զարդանկարով առանձնանում է ավելի փոքր կարասը: Անոթի բաց դեղնա-դարչնագույն ուռուցիկ իրանը վզից ցած զարդարված է միմյանց հաջորդող երկու գոտիներով, որոնցից առաջինը ներկայացնում է մարդկանց և եղջերուների ռիթմիկ հերթագայություն (որսի տեսարան), իսկ հաջորդը՝ ալ կարմիր գույնով կատարված, միմյանց մեջ ներգծված դեպի ցած ուղղված եռանկյունիներ են (աղ. III/21-23):

Գունազարդ կարասները օգտագործվում էին տոնական արարողությունների ժամանակ և հաճախ կրել են հարուստ դեկորատիվ հարդարանք[2]: Երբեմն էլ, ինչպես տեսանք Մարտակերտի կարասի օրինակով, ծառայել են իբրև թաղման անոթներ:

Անտիկ ժամանակաշրջանով թվագրվող գունազարդ ամբողջական կարասի լավագույն օրինակը Գառնիից հայտնաբերվածն է[3]: Այն շագանակագույն հիմնագույնի վրա կարմրավուն ներկով արված միագույն կատարում և հրաշալի փայլեցում ունի և թվագրվում է մ.թ.ա. II-I դդ.: Արմավիրում հայտնաբերված գունազարդ կարասի բեկորը բաց դարչնագույն հիմնագույնի վրա կրում է կարմիրով պատկերված եղջերու[4]: Պատկերն իրականացված է ուրվագծային և ընդհանրացված, կենդանու անատոմիական մանրամասները տրված չեն: Գունազարդ կարասների օրինակներ հայտնի են նաև անտիկ Դվինից[5] և Ավանի անտիկ բնակավայրից[6]: Հելլենիստական ժամանակաշրջանի նմանատիպ հարուստ հարդարմամբ կարասներ հայտնի են նաև հարևան երկրներից, որոնցից հատկապես կարելի է առանձնացնել Արևելյան Վրաստանի Սամադլո հուշարձանում հայտնաբերված գունազարդ մեծ կարասները[7]:

Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենի զարդամոտիվների մեջ առավել հաճախակի են հանդիպում թռչներամի պատկերները: Դրանք տեղադրված են հիմնականում փակ անոթների ուսերին և ներառված են անոթների իրանը գոտևորող հորիզոնական գծերի մեջ (աղ. III/18-20):

II. **Փայլեցում** (աղ. IV/1-5):

Անտիկ Տիգրանակերտում, ինչպես Հայաստանի այլ հելլենիստական հուշարձաններում շարունակվում է նաև խեցեղենի փայլեցումով հարդարելու եղանակը, որն ունի հազարամյակների պատմություն:

---

[1] Կարասային թաղումը հայտնաբերվել է 2013 թ. ամռանը Մարտակերտ քաղաքի Սասուն Հակոբյան փողոցում ջրագիծ անցկացնելիս: Պեղումներն իրականացրել է Համլետ Պետրոսյանը: Կարասային թաղման նյութերն ուսումնասիրվում և պատրաստվում են հրատարակության: Հայտնում ենք մեր երախտագիտությունը Հ. Պետրոսյանին՝ տրամադրած տեղեկության և լուսանկարների համար:

[2] Гагошидзе Ю.М., Самадло (археологические раскопки). Тб., 1979, сс. 93-95

[3] Առաքելյան Բ., Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության (մ.թ.ա. VI դ.- մ.թ. III դ.), Ե., 1976, էջ 74, աղ. X:

[4] Аракелян Б., О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «ИФЖ», 1969, № 4. сс. 157-174; Տիրացյան Գ., Կարապետյան Ի., Արմավիրի 1983-1984 թթ. պեղումները, «ՊԲՀ», 1985, № 4, էջ 223, նկ. 6-2:

[5] Քոչարյան Գ., Դվինի հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղենը, «Լրաբեր հասարակական գիտությունների» (ԼՀԳ), 1974, №5, էջ 82-97; Քոչարյան Գ., 1991, Դվինը Անտիկ դարաշրջանում, «Հնագիտական պեղումները Հայաստանում», հ. 22, 1991, էջ 41:

[6] Демирханян А., Северо-восток Еревана в эпоху Арташесидов (II в до н.э.- I в.н.э.), Е., 2010, табл. 33.

[7] Гагошидзе Ю.М., ук.соч., табл. 1, 2, 4.

Բնակավայրի մ.թ.ա. I – մ.թ. II-դդ. շերտերից հայտնաբերված այս եղանակով հարդարված օրինակները առավելապես մոխրագույն խեցեղենի, հազվադեպ նաև բաց վարդագույն անփայլ մակերես ունեցող բեկորներ են: Դրանց հիմնական զարդամոտիվը ուղղահայաց, ալիքաձև կամ հորիզոնական գծերն են՝ իրականացված տարբեր ինտենսիվությամբ և խտությամբ, որոնք երբեմն անոթը ծածկում են ամբողջությամբ:

III. Փորագրազարդում (աղ. IV/6-8):

Խեցեղենի հարդարման այս տեխնիկան ամենաավանդականն է և ունի խորը արմատներ: Այն Տիգրանակերտի անտիկ խեցեղենի մեջ ներկայանում է քիչ քանակությամբ: Փորագրազարդ բեկորները հիմնականում կրում են երկրաչափական մոտիվներ՝

1. տարբեր դասավորությամբ օղակներ,
2. կետերի և ալիքների համադրություն,
3. զուգահեռ գոտիների մեջ ուղիղ և շեղ դասավորված գծիկներ,
4. կետային հարդարանք,
5. ներգծված մի քանի անկյուններ,
6. եղունգազարդ:

Դրանք հանդիպում են ինչպես բաց դեղնադարչնագույն, այնպես էլ սև ու մոխրագույն անոթների վրա: Փորագրազարդման եղանակը լայնորեն կիրառվում էր նաև անոթների բռնակների ձևավորման ժամանակ:

Արցախի Տիգրանակերտից ցայսօր հայտնի փորագրազարդ նմուշների մեջ առանձնանում է Անտիկ առաջին թաղամասում 2012 թ. հայտնաբերված հեծյալի պատկերով խեցատը (աղ. IV/6): Այն դեղնադարչնագույն, փայլեցված մակերեսով անոթի իրանի բեկոր է: Պսակից իրանին անցնող հատվածը երիզվում է փորագիր խոշոր զիգզագաձև զարդագոտիով, ինչը բնորոշ է մեծ, փակ անոթների (ծափ) հարդարանքին: Տվյալ զարդագոտուց ցած փորագիր եղունգազարդ մոտիվներից կազմված երկշարք զիգզագներ և եռանկյունիներ են: Ուշադրության է արժանի բեկորի ձախ հատվածում տեղակայված ուրվագծային կատարում ունեցող դեպի աջ ուղղված հեծյալի պատկերը: Ձին տրված է առջևի ոտքերն առաջ ձգված (պարզած) վարգի ընթացքում: Հետևի ոտքերն ու պոչը չեն պահպանվել: Ականջները ցցուն են, գլուխը եռանկյունաձև տեսք ունի: Հեծյալը ձախ ձեռքով բռնել է ձիու սանձը, իսկ վեր բարձրացրած աջ ձեռքում մահակ կամ նիզակ է կրում (վերջավորությունը չի պահպանվել), որը կարծես պատրաստվում է նետել: Ամենայն հավանականությամբ այստեղ որսի տեսարան է պատկերված: Դա է մատնանշում նաև Անտիկ թաղամասում հայտնաբերված նմանօրինակ մեկ այլ խեցատը, որի վրա եղունգազարդ զարդերիզի մեջ զետեղված է ստատիկ կանգնած եղջերուի պատկերը (աղ. IV/7): Պահպանվել է կենդանու միայն առաջնամասը՝ ուրվագծային եղանակով կատարված եղջյուրներով զարդարված գլուխը և առջևի ոտքերը: Թեև այս երկու բեկորները չեն միանում, սակայն կավի բացարձակ նույն ֆակտուրան, մակերևույթի եղունգազարդ զարդամոտիվը և պատկերների ուրվագծային փորագրության ոճը թույլ են տալիս պնդել, որ դրանք միևնույն անոթի մաս կազմող բեկորներ են: Անոթի վրա ներկայացված որսորդության տեսարանը կարող է ունենալ ծիսական նշանակություն, քանի որ պաշտամունքային անոթներն էին կրում կենդանիներ պատկերող հորինվածքային տեսարանները[1]:

IV. Դրոշմազարդում (աղ. IV/9-12):

Դրոշմազարդման եղանակով հարդարված խեցեղենի հետաքրքիր օրինակներ են Անտիկ առաջին թաղամասում տարբեր տարիներին հայտնաբերված հայելափայլ, սև արտաքինով, ներքուստ «ողկուզակիր» գոտիներով հարդարված գավաթներն ու ըմպանակը (աղ. IV/10): Նմանօրինակ խեցեղենի նմուշներ Արցախի, Հայաստանի և հարևան երկրների տարածաշրջանից դեռևս հայտնի չեն:

---

[1] Կարապետյան Ի., Արմավիրի խեցեգործության մի նոր տեսակ, «Լրաբեր հասարակական գիտությունների» (ԼՀԳ), 1973, № 11, էջ 68-73:

Կարելի է տարբերակել 3-11 հատիկներով կազմված խաղողի ողկույզներ, որոնք ունեն տարբեր դասավորություն: Պահպանված օրինակները փաստում են, որ միևնույն անոթի ներսում միաժամանակ երկու **«ողկուզակիր»** գոտիներ են դրոշմվել: Ընդ որում դրոշմազարդ գոտին երբեմն դրվում էր շուրթին շատ մոտ, ինչպես օրինակ ըմպանակի դեպքում է: Ողկուզաշարերն անոթի ներսը գոտևորող հորիզոնական փորագիր գոտիների մեջ են առնվում: Կատարման տարբերակների բազմազանությունը թույլ է տալիս ենթադրելու, որ սևափայլ անոթները տեղական արտադրության արգասիք են:

Դրոշմազարդ անոթների մի քանի օրինակներ էլ հայտնի են Հյուսիսային պարսպի պեղումներից: Դրանցից մեկը կարմրավարդագույն անոթի բեկոր է, որը կրում է դրոշմազարդ խորհրդանիշ կամ վարպետի նշան:

Հաջորդ օրինակը ներկայացնում է դեղնադարչնագույն, անփայլ, քիչ ավազախառն, կոպտավուն խեցիով բաց անոթի հատակ: Դրա կենտրոնում՝ հատակամերձ հատվածում, սեղմումով արված երկու համակենտրոն օղակներից մեծին կցված է դաջված **եղևնազարդ** կամ **ծառ** (աղ. IV/9): Նմանօրինակ դրոշմակիր անոթների դասական օրինակներ հայտնի են հունահռոմեական աշխարհում[1]:

Ամենայն հավանականությամբ Արցախի Տիգրանակերտում հայտնաբերված եղևնազարդ անոթը անտիկ խեցեղենի տեղական նմանակում է:

V. **Կաղապարի օգտագործում** (աղ. IV/13):

Տիգրանակերտից հայտնի են կաղապարի մեջ պատրաստված գդալածև, հակադիր ելուստներով զարդարանք ունեցող հատակներով թաս-փիալաների մի քանի օրինակներ, որոնցից մեկը սև խեցուց է (աղ. IV/9), մյուսները՝ բաց, վարդագույն:

Փիալաները հայտնի են դեռևս ուրարտական ժամանակաշրջանից և իրենց գոյությունը շարունակում են մինչև մեր թվարկության առաջին դարեր: Դրանցից ակոսավոր և ելուստավոր զարդերով թասերը հանդիսանում են մետաղյա անոթների ընդօրինակությունը, որ սկսվել է դեռևս ուրարտական շրջանում, շարունակվել է վաղ հայկական և հելլենիստական շրջանում: Աքեմենյան ժամանակաշրջանում ընդօրինակվել են ոչ միայն կավով, այլև ապակիով[2]:

VI. **Ծեփման և վերադրման եղանակ** (աղ. IV/14-20):

Անոթների ձևավորումը ամենաբարդ միջոցն է, որը ենթադրում է տարբեր տեխնիկաների համաժամանակյա օգտագործում:

Գեղարվեստական հարդարանքի այս եղանակով գլխավորապես ձևավորվում էին անոթների իրանները, ծորակները և բռնակները: Այն գերադասելի էր նախ և առաջ կարասների հարդարանքի համար: Վերադիր պարանահյուս կամ իրար հաջորդող ուռուցիկ «մատնեքավոր» զարդամոտիվներով ձևավորված գոտիները հիմնականում զետեղվում էին կարասների ուսերի և պսակների միացման, ինչպես նաև իրանի ամենալայն հատվածներում: Երբեմն նման գոտիներ հանդիպում են նաև կարասների շուրթերի տակ կամ անմիջապես շուրթեզրին[3] (աղ. IV/16):

Անտիկ խեցեգործ վարպետների կողմից ծեփման և վերադրման եղանակը նախընտրելի էր կենդանակերպ (զոոմորֆ) անոթների, ինչպես նաև խեցանոթների ծորակների և բռնակների գեղարվեստական հարդարանքի մեջ: Նմանօրինակ ձևավորումը միտված էր շեշտելու անոթի ծիսական բնույթը և հիմնականում ուներ պահպանիչ նշանակություն:

Տիգրանակերտում հայտնաբերված կենդանակերպ զարդամոտիվներով խեցեղենի օրինակները քիչ են և բեկորային, ինչը հաճախ թույլ չի տալիս վերականգնելու անոթների իրական ձևը: Նման օրինակներից է Տիգրանակերտի հարավային պարսպապատի հիմքերը մաքրելու ժամանակ 2007 թ. հայտնաբերված գորշասևավուն խեցուց պատրաստված հորթուկի գլուխը: Ամենայն հավանականությամբ այն եղջերագավաթի

---

[1] Edwards R., Corinth VII, «Hellenistic pottery», 1975; Pontus Hellstrom, Lanrbranda, 1965, pl. 6-7.

[2] Խաչատրյան Ժ., Մ.թ.ա. VII-I դարերի խեցեղենի բնորոշ մի ձև, «ՊԲՀ», 1970, № 2, էջ 276-277:

[3] Сафарян В., Керамика кувшинных погребений Арцаха периода эллинизма, «Общероссийская и национальная идентичность», материалы международной научно-практической конференции, Пятигорск, 2012, сс. 487-498.

կամ սնամեջ կենդանակերպ անոթի մաս է և ունի բավականին ռեալիստական կատարում (աղ. IV/14):

Նմանօրինակ կենդանակերպերով (ձիերի, թռչունների, եղջերուների և այծերի պատկերներով) ձևավորված անոթները հայտնի են Հայաստանի և Արցախի մի շարք հնավայրերից՝ Արմավիրից, Դվինից, Օշականից, Արտաշատից, Շիրակավանից, Կերենից և այլն[1]:

Սև խեցուց հայելափայլ մի եղջույր հայտնաբերվել է միջնաբերդում, ըստ ամենայնի, այն ևս զոոմորֆ անոթի մաս է կազմել: Մեկ այլ օրինակ է Հյուսիսային պարսպի տարածքում հայտնաբերված բաց հիմնաներկով պատված խեցանոթի իրանի վրա տաք կարմիր գույնով ներկված թռչնի գլխի ոճավորված քանդակային պատկերը (աղ. IV/17): Բավականին ռեալիստական կատարում ունի Անտիկ առաջին թաղամասում հայտնաբերված խոյի գլխով հարդարված ծորակը (աղ. IV/15):

Երբեմն անոթների բռնակները կրում են հասարակ կամ գունազարդ տարբեր չափերի վերադիր գնդիկներ կամ ձևավորվում են ելուստների և տարածև զարդերի միջոցով, որոնք համապատասխանաբար մետաղյա գամերի և եղջյուրների նմանակումներ են (աղ. IV/19):

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ Տիգրանակերտի անտիկ ժամանակաշրջանի խեցեղենը Հայաստանի հելլենիստական խեցեգործության հարդարման զարդաձևերի և դրանց իրականացման հնարների անքակտելի մասն է, բայց ունի և իր առանձնահատկությունները: Այն զարմացնում է իր զարդամոտիվների բազմազանությամբ՝ ներկայացնելով անտիկ դարաշրջանում խեցեղենի գունազարդման գործընթացի ամենավերջին և ամենածաղկուն փուլը:

**Армине Габриелян, Предварительная классификация декоративного убранства античной керамики Арцахского Тигранакерта.(I в. до н.э. - III в. н. э.),-**Раскопки Тигранакерта в Арцахе выявили многочисленные материалы, исследование которых очень важно для изучения материальной культуры античной Армении и Арцаха.

Значительная часть найденных материалов, приобретенных раскопками составляет античная керамика, которая привлекает внимание своим изобилием форм и декоративным разнообразием. Достаточное количество представленного материала позволяет произвести классификацию декоративного убранство керамики датируемой I в. до н.э. - III в. н.э.

Исследование керамики показало, что техника декорирования сосудов осуществлялась методом росписи, полировки, резьбы, тиснения и лепки, среди которых доминирует расписная керамика.

В античный период в Армении и Арцахе традиция орнаментирования керамического материала процветает и достигает своей кульминации. Античная керамика Тигранакерта выделяется многообразием орнаментальных мотивов, представляющих собой последнюю и наиболее процветающую фазу декорирования керамики того периода.

Виды декоративных мотивов различны и могут быть условно разделены на четыре группы:

1. геометрический
2. растительный
3. астральные знаки
4. фигуративные изображения и сцены

Почти все мотивы, как правило, заключены в рамки поясов. Каждый пояс украшен одним мотивом. В результате поверхность сосуда представляет собой композицию, состоящую из 2-5 поясов, каждый из которых содержит различные мотивы.

---

[1] Գնունի Ա., Խաչատրյան Գ., Կերենի դամբարանադաշտը, «Հուշարձան», Դ-Ե, պատմամշակութային մատենաշար, Երևան 2008, էջ 146, նկ. 1.

**Armine Gabrielyan, Ornamentation of ceramics from Tigranakert, Artsakh preliminary cassification. (1st century B. C. – 3rd century A.D.),-**(Artsakh, Tigranakert, Hellenistic ceramic, ornament) Excavations of Tigranakert in Artsakh revealed numerous materials, the study of which is important for the research of the material culture of Hellenistic Armenia and Artsakh.

A considerable part of the materials excavated in about ten years the present Hellenistic ceramics, noteworthy both for its various forms and its decoration diversity. The great amount of the material allows for making classification of the various ornaments of the ceramics including the period from 1st century B. C. – 3rd century A.D.

The pottery analysis revealed that decoration of the vessels was applied by the means of painting, burnishing, incising, stamping and application, with preference of the painting technique.

In the Hellenistic period in Armenia and Artsakh, the tradition of pottery ornamentation flourished and reached its culmination. The Hellenistic ceramics from Tigranakert are noteworthy for a diversity of ornamentation motifs, representing the latest and the most prosperous phase of pottery decoration in that period.

The ornamental motif types are different and could be conditionally divided into four groups:

1. geometric
2. floral
3. astral signs
4. figurative depictions and scenes

Almost all of the motifs, as a rule, are enclosed in frames of the relief belts. Each belt is decorated with a single motif. As a result, the vessel surface represents a composition consisting of 2-5 belts, each enclosing various motifs.

## I. Երկրաչափական զարդամոտիվներ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |
| 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | | | | |
| 11 | 12 | 13 | 14 | 15 |
| | | | | |
| 16 | 17 | 18 | 19 | |
| | | | | |
| 20 | 21 | 22 | 23 | 24 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **25** | **26** | **27** | **28** | **29** |
| | | | | Աղյուսակ II |
| | | | | |
| 1 | 2 | 3 | **4** | **5** |
| | | | | |
| **6** | **7** | **8** | **9** | **10** |
| | | | | |
| 11 | | | | |
|  | | | | |
| 16 | 17 | 18 | | |

19

20



21

Աղյուսակ III

1

2

3

4

5

6

7

8

9

10

11

12

13

14

15

16

17

18

19

20

21

22

23

Աղյուսակ IV

1

2

3

4

5

6

7

8

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| 9 | 10 | 11 | 12 |
| | | | |
| 13 | 14 | 15 | 16 |
| | | | |
| 17 | 18 | 19 | 20 |

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Էդիկ Մինասյան** - պ.գ.դ., պատմության ֆակուլտետի պրոֆեսոր, edikminasyan@ysu.am
**Արտակ Մովսիսյան** - պ.գ.դ., պրոֆ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, artakmovsisyan@ysu.am
**Հենզել Մանուչարյան** - փ.գ.դ., ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր
**Ֆելիքս Մովսիսյան** - պ.գ.դ., պրոֆեսոր, ՎՊՀ պատմության ամբիոնի վարիչ
**Վալերի Թունյան** - Տուրիզմի և սերվիսի ռուսական պետական համալսարանի Երևանյան մասնաճյուղի պրոֆեսոր, ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի դասախոս
**Արման Եղիազարյան** - պ.գ.դ., ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, armanyeghiazaryan@ysu.am
**Սամվել Պողոսյան** - պ.գ.դ., ԵՊՄՀ պատմության և իրավագիտության ամբիոնի փոխդեկան
**Կարինե Եղիազարյան** - պ.գ.թ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ
**Սամսոն Քառյան** - պ.գ.դ., պրոֆեսոր
**Վահագն Հակոբյան** - պ.գ.թ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, v.hakobyan@ysu.am
**Կարեն Խաչատրյան** - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ
**Գագիկ Ժամհարյան** - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի գիտաշխատող
**Էդուարդ Զոհրաբյան** - պ.գ.թ., ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ
**Դավիթ Թինոյան** - պ.գ.թ., ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս
**Էմմա Ստեփանյան** - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող
**Վարդիթեր Աբրահամյան** - պ.գ.թ., դոցենտ, Շիրակի պետական համալսարան, Պատմության և փիլիսոփայության ամբիոն, v_abrahamyan@yahoo.com
**Լիլիթ Մելիքյան** - ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ
**Գուրգեն Մուրադյան** - ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրոս
**Դավիթ Կարապետյան** - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ասպիրանտ
**Էդուարդ Հովհաննիսյան** - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ասպիրանտ
**Տաթևիկ Մինասյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի դասախոս
**Արամ Խաչատրյան** - ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ (1999-2002 թթ. ), aram.khachatryan@megafood.am
**Սուսաննա Առաքելյան** - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ
**Նարինե Նուշերվանյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ
**Էդուարդ Կեսոյան** - Ծովինարի Ա. Խաչատրյանի անվան միջն. դպրոցի պատմության ուսուցիչ, gevorgkesoyane@mail.ru
**Աստղիկ Մովսիսյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի հայցորդ
**Լուսինե Գրիգորյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոն, մագիստրոս
**Մելիք Հովսեփյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ
**Հենրիկ Աբրահամյան** - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.դ., պրոֆեսոր
**Լիլիթ Մատինյան** - ԵՊՀ հայցորդ
**Սոնա Մելքոնյան** - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ
**Դավիթ Զուլիակյան** - Գորիսի պետական քոլեջի պատմության դասախոս, ԵՊՀ հայցորդ

**Կարինե Ասատրյան** - Գորիսի պետական քոլեջի անգլերենի դասախոս, կադրերի տեսուչ
**Նժդեհ Հովսեփյան** - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ
**Վահե Հովսեփյան** - ԵՊՀ Պատմության ֆակուլտետ, Հայոց պատմության ամբիոն, մագիստրանտ
**Վարդան Մակիչյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ
**Գեղամ Ասատրյան** - ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ
**Առնակ Սարգսյան** - ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ
**Գայանե Սոլախյան** - Երևանի հայ-ռուսական սլավոնական համալսարանի հայցորդ
**Ռոման Գազանչյան** - ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրոս
**Զուլիետա Կճանյան** - ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս, ասպիրանտ
**Ժաննա Հարությունյան** - ԵՊՀ միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն ամբիոնի ասպիրանտ
**Արսեն Զուլֆալակյան** - ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ
**Գեորգի Կոլարով** - ք.գ.թ., Երևանի հայ-ռուսական սլավոնական համալսարանի և Վառնայի տնտեսագիտական համալսարանի դասախոս
**Անդրանիկ Առաքելյան** - ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ
**Աշոտ Թովմասյան** - ՀՀ պաշտպանության նախարարության ռազմարդյունաբերության պետական կոմիտեի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ, քիծ 1-ին դասի խորհրդական, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ
**Արշալույս Տետեյան** - Մ. Հերացու անվան ԵՊԲՀ հասարակագիտական առարկաների ամբիոնի և ԵՊՀ հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս
**Միեր Հովհաննիսյան** - պ.գ.թ., ՀՀԻ փոխտնօրեն, mher.hovhannisyan@ysu.am
**Ռաֆիկ Նահապետյան** - պ.գ.դ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր
**Սաակ Տարոնցի** - ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի ասպիրանտ
**Արմինե Գաբրիելյան** - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ
**Ռայա Սարգսյան** - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող
**Հասմիկ Հարությունյան** – պ.գ.թ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի ասիստենտ
**Արուսյակ Ղարիբյան** - ՀԱԱՀ հայոց պատմության և փիլիսոփայության ամբիոնի ասիստենտ
**Մարինե Հարությունյան** - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի գիտաշխատող
**Սիրանուշ Առաքելյան** - ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսության տեքստաբանության բաժնի ավագ լաբորանտհետազոտող, nrane3@yahoo.com
**Հայկազ Հովհաննիսյան** - պ.գ.դ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, haykazh@mail.ru
**Հրանտ Ավանեսյան** - հ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, avanesyanh@ysu.am
**Սահակ Հովհաննիսյան** - մանկ. գիտ. թեկն., դոցենտ, ԵՊՀ փորձարարական հոգեբանության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, s.hovhannisyan@ysu.am
**Մարինե Մինասյան** - արվեստագիտության թեկնածու, ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, m_minasyan@yahoo.com
**Հայկուհի Մուրադյան** - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի դասախոս
**Սմբատ Հովհաննիսյան** - պ.գ.թ., Համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ
**Անահիտ Զուրաբյան** - Ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս

**Դիանա Հակոբյան** - ԵՊՀ պատմության ֆակուլտետ, մագիստրանտ,
diana.hakobyan6ysumail@.am
**Արևիկ Մինասյան** - ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս
**Մարիաննա Եփրեմյան** - ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս
**Ասյա Դարբինյան** - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս
**Լիանա Մալխասյան** - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի ասպիրանտ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*


Էդիկ Մինասյան, ԱՐԻԱՍԻՐՏ ՀԱՅՈՒՀԻՆ....3
Արտակ Մովսիսյան, ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ....7
Հենզել Մանուչարյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ....13
Ֆելիքս Մովսիսյան, ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ....23
Валерий Тунян, НАЦИОНАЛЬНАЯ ИДЕЯ И НАЦИОНАЛЬНЫЕ СОВЕЩАНИЯ В 1914-1917 ГГ. ....41
Արման Եղիազարյան, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻԶԱՎԱՅՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՆՈՐ» ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԼԻԲԱՆԱՆԻ ԵՎ ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ) ....50
Սամվել Պողոսյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ. ....67
Կարինե Եղիազարյան, Քարմիլե Եղիազարյան, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ) ....81
Սամսոն Քառյան, ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ....91
Վահագն Հակոբյան, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՓՈՒԼԸ ....96
Կարեն Խաչատրյան, Գագիկ ժամհարյան, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ)....108
Էդուարդ Զոհրաբյան, ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻԱՄՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ....115
Դավիթ Թինոյան, ՀԵԹՈՒՄ Ա-Ի «ՄՈՆՂՈԼԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ....121
Էմմա Ստեփանյան, ԱՄԵՐԻԿԱՀԱՅ «ԱՐԱՔՍ» ՀԱՆԴԵՍԸ (1905-1907 ԹԹ.) ....128
Վարդիթեր Աբրահամյան, X-XI ԴԱՐԵՐՈՒՄ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԶԱՎԹԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ ....135
Լիլիթ Մելիքյան, ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ....143
Գուրգեն Մուրադյան, ՎԱՂՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՆԱ ՎԱՇՉԵՎԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ....148
Դավիթ Կարապետյան, ԱՇՈՑՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԸՍՏ ՎԱԽՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ....153
Էդուարդ Հովհաննիսյան, ՂԱՐԱԲԱՂԻ /ԱՐՑԱԽԻ/ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ» ....159
Տաթևիկ Մինասյան, ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ-XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)....166
Արամ Խաչատրյան, ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ 1900-1907 ԹԹ. ....174
Սուսաննա Առաքելյան, ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ....185
Նարինե Նուշերվանյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ....191

Էդուարդ Կեսոյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ..... 196
Աստղիկ Մովսիսյան, ՀՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ..... 206
Լուսինե Գրիգորյան, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (1964-1985 ԹԹ.) ..... 215
Մելիք Հովսեփյան, ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1964-1985 ԹԹ.) ..... 223
Լիլիթ Մատինյան, Հենրիկ Աբրահամյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՆՈՒՆԴ ..... 229
Սոնա Մելքոնյան, ԷԹՆԻԿ ԶՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1988-1991 ԹԹ.) ..... 237
Դավիթ Զուլիակյան, Կարինե Ասատրյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1991-1994 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ..... 242
Նժդեհ Հովսեփյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 1991-2001 ԹԹ. ..... 250
Վահե Հովսեփյան, ԽՈՋԱԼՈՒԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ..... 261
Վարդան Մակիչյան, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ..... 269
Գեղամ Ասատրյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ..... 273
Առնակ Սարգսյան, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2017 ԹԹ. ..... 281
Гаяне Солахян, ЕВРАЗИЙСТВО В СОВРЕМЕННОМ ИДЕЙНО – ПОЛИТИЧЕСКОМ ПРОСТРАНСТВЕ РОССИИ ..... 289
Ռոման Գազանչյան, ՄՈՆՐՈՅԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԱՄՆ-Ի XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ ..... 295
Զուլիետա Կճանյան, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԿԱՆԱԴԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ԼՈՐԴ ԴԱՐԵՄԸ ..... 302
Ժաննա Հարությունյան, ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼԻ ԱՖՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 310
Արսեն Զուլֆալակյան, ԶՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆՆԵՐԻՆ ..... 316
Георгий Коларов, МАОИЗМ В ЛАТИНСКОЙ АМЕРИКЕ. СЕНДЕРИЗМ, КАК МАОИЗМ КОНЦА XX ВЕКА ..... 322
Անդրանիկ Առաքելյան, ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ (1992-2011 ԹԹ.) ..... 328
Աշոտ Թովմասյան, ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ..... 333
Արշալույս Տետեյան, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 337
Միեր Հովհաննիսյան, ԳԻՏԱԿԱՆ ՀՂՈՒՄՆԵՐԻ ՁԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 344

*ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Ռաֆիկ Նահապետյան, ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 349
Սաակ Տարոնցի, ԱՐԵՎ-ՍԿԱՎԱՌԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՄՈՏԻՎՆԵՐՈՒՄ ..... 355

Արմինե Գաբրիելյան, ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ (Մ.Թ.Ա. I – Մ.Թ. III ԴԴ.) ....372
Ռայա Սարգսյան, ՄԻՐԱՔ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԳՏՆՎԱԾ ՁԻԹԱՃՐԱԳՆԵՐԸ ....384
Հասմիկ Հարությունյան, ԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶՎԱԴԱՎԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)....388
Արուսյակ Ղարիբյան, ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ ....401
Մերի Դալլաքյան, ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԵՔՊԹ-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ....407
Մարինե Հարությունյան, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ ....411

*ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ*

Անի Նազարյան, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ....416
Siranuysh Araqelyan, ON A KHACHKAR (STONE CROSS) INSCRIPTION IN ARINJ ....423
Garik Atanesyan, NEW INTERPRETATIONS OF PUBLIC FUNCTIONS OF MONUMENTS IN THE YEREVAN'S CONTEMPORARY PUBLIC DISCOURSE ....427
Հայկազ Հովհաննիսյան, Հրանտ Ավանեսյան, Սահակ Հովհաննիսյան, Մարինե Մինասյան, ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ....434
Հայկուհի Մուրադյան, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ....441
Սմբատ Հովհաննիսյան, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ ԵՎ ՇԵՔՍՊԻՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ (ՆՈԹԵՐ ՈՒԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ»՝ ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ)....448
Анаит Зурабян, «МОДЕЛЬ ПУТИ» И ЕЁ ОТРАЖЕНИЕ В РОМАНЕ «ЖИЗНЬ И СУДЬБА»....462
Դիանա Հակոբյան, ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը՝ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ....467
Arevik Minasián, ANÁLISIS SEMÁNTICO DE LOS REFRANES Y PROVERBIOS CON EL COMPONENTE "PERRO" EN ESPAÑOL Y ARMENIO....473
Mariana Yepremián, ANÁLISIS SEMÁNTICO - COMPARATIVO DE LOS REFRANES Y PROVERBIOS QUE DENOTAN EL CONCEPTO GATO EN ESPAÑOL Y ARMENIO....482
Ասյա Դարբինյան, ՎՐԱՑԵՐԵՆԻ ՆԱԽԱԲԱՅԵՐՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ....491
Լիանա Մալխասյան, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ....497

*ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ*

ՄԵԾԱՐԺԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ....503
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ....506

*ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ*

САРКИС СУРЕНОВИЧ КАЗАРОВ....512

*ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴԸ*

ԷԴՎԱՐԴ ԳԱԼՈՒՍՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ ....514

ՀԱԿՈԲ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ ..... 516

*ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ* ..... 519

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
# ԵՎ
# ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Խմբագիր՝ Արման Եղիազարյան
Համակարգչային ձևավորումը՝ Դիաննա Դավթյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
history@ysu.am, edikminasyan@hotmail.com,
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200

«Պատմություն և մշակույթ» հանդեսում հրապարակված գիտական հոդվածները բավարարում են թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և ընդունելի են ԲՈՀ-ի կողմից:

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

*Հանդեսում հրատարակության ներկայացվող հոդվածների պահանջները.*

ա) հեղինակի անուն, ազգանուն

բ) հոդվածի խորագիրը (գլխատառերով)

գ) հեղինակի գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, էլ. հասցեն, հեռախոսահամարը

դ) հոդվածի լուսանցքները. վերևում, ներքևում, աջ և ձախ կողմերում՝ 20 մմ, միջտողային ինտերվալը՝ 1.5, տառատեսակը՝ Unicode

ե) ռուսերեն, անգլերեն ամփոփագրեր (5-8 տող), այլալեզու հոդվածի համար՝ նաև հայերեն ամփոփագիր

զ) հայերեն, ռուսերեն, անգլերեն բանալի բառեր

է) հղումները տողատակում

ը) հոդվածը կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով, 10-20 էջ՝ անպայման գիտական ղեկավարի կամ մասնագիտական ամբիոնի երաշխավորությամբ:

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ 2017